

# ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՀԱՅՅԵՑԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ինչպէս մատնանշուած է, Մեծ Եղեռնի Հարիւրամեակի վերջին տասնամեակին մէջ կը գտնուինք: Հակառակ Մեծ Ոճիրին ճանաչման ուղղութեամբ ձեռք բերուած կարգ մը յաջողութիւններուն, չենք կրցած տակաւին ապահովել Հայկական Ցեղասպանութեան միջկապին ճանաչումը: Աւելին, անցողակի միայն անդրադարձած ենք մեր ներթափան ու հողային պահանջներուն: Մեր թերացումին զլիւսւոր պատճառ կարելի է նկատել այն իրողութիւնը, թէ արեւմտահայութիւնը, իբրեւ ցեղասպանութիւն ու բռնազաղթ վերապրած տարաբիր հասարականութիւն, չէ կազմակերպուած, գուրկ է իրաւական հանգամանքէ եւ մինչեւ այսօր չունի ներկայացուցչական կեդրոնական մարմին մը, որ կարենայ դիմել միջազգային ատենաներու:

Կենսական է, ուրեմն, գոյաուումը Համասփիւռքեան մարմինի մը, որ ի վիճակի ըլլայ ներկայացնելու մեր դատին բարոյական, նրեթական ու հողային պահանջները: Սակայն, աւելի քան կենսական, ճակատագրական է որ այս մարմինը առաջին Հերթին ունենայ մնայուն ու Հաստատուն յենարան մը, ամբարկուռ հիմ մը, զինք սնուցանող կենսունակ ենթահող մը: Եւ այդ ենթահողը մեր ժողովուրդն է:

Ճակատագրական է որ Հայ Դատի Համապարփակ, Հետեւողական, ազդու եւ արհեստավարժ հետապնդումին Համար մեր ժողովուրդը ունենալ անպայտին գիտակցութեան զարթօնք մը, սթափանք մը, վերակենդանացում մը: Ան պէտք է այլեւ վճռէ թօթափել իր անտարբերութիւնը, օտարմոլութիւնը, արեւմտախոր եւ մեր ազգային արժէքներուն վերէն նայելու քաղցրեմիական սովորութիւնները: Հրատուպ, ծանրակշիռ Հարց է, որ մեր նոր սերունդը զգայ Հայ ու ապրի Հայօրէն: Զգայ կիրքով, թէ ժառանգորդը, յանձնառու իրականութեւս ու պահանջատէրն է Արեւմտահայաստանին ու անմնացորդ հաւատարմ, թէ իր պարտքն է ըլլալ պահպանող՝ եղբարբայտ Սիւսմանթոյի, Վարուժանի եւ այլոց լեզուին, հոգեմտաւոր աւանդին ու ազգային իտէպներուն:

Հայ Դատ չի շահուիր բրեքը կթէ ինչպէս Կառնիստները՝ Հայեցիութեթմամբ շնչող, հայեցիութեամբ ապրող ու հայութեամբ ստգնապող գիտակից սերունդ մը:

Ա) Ինչպէս միասնաբար ու գործակցաբար Հայ Դատ պիտի Հետապնդենք, կթէ ըւնենանք միեւնոյն լեզուին ու Բառ ու Բանին, հասարակաց մեր մշակոյթին ու պատմութեան իմացութիւնը, որ սփռուած, մասնատուած մեր ժողովուրդը զօգող ու միաւորող ամենէն անուր ու պի՛ն ազգասն է:

Բ) Եթէ մենք քաղաքագրակ չըլլանք մեր պատմութեան ու մշակոյթին, Ինչպէս պիտի քարոզչութիւն ընենք օտարներուն:

Գ) Հայ Դատի Հետապնդման ճանապարհին, կթէ մեր կազմակերպութիւններն ու կուսակցութիւնները չեն գիտել կազմաւորման ու գործունէութեան իրարու պատմութիւնը, կթէ զիրար չեն ճանչնար, Ինչպէս պիտի Հարորդակցին իրարու Հետ ու ստեղծեն Համերաշխութիւն ու Համագործակցութիւն:

Դ) Ամենէն հաւուրը, Ինչպէս Հայ Դատ պիտի պաշտպանենք կթէ գունատած, իսթաղուում ու այլափոխուած է մեր ազգային ինքնութիւնը, կթէ գըլլիվայր կը նահանջենք ու կորսնցուցած ենք ազգային մեր արժանապատուութիւնն ու Հասարակութիւնը, կթէ «յաջողուած», պատշաճելու պատճառարանութեամբ դարձած ենք պատեհապաշտ, շահամոլ, նոյնիսկ ստրկամիտ ու ենթակայ՝ օտարներու ցուցմունքներուն ու սադրանքներուն:

Այսօր, Սփիւռքի մեր Հայութեան քանի՞ տոկոսը Հայօրէն կ'անարի եւ ոչ թէ կը գոհանայ «Հայկական ծագում» ունենալով: Ո՞րքանով ծանօթ է մեր իդձերուն ու երազներուն: Ո՞րքանով յանձնառու է ան տրամաբարելու իր ժամանակէն, միտքէն ու նրթէն՝ մեր ժողովուրդին Համար: Ու մանաւանդ տալու

արիւն՝ կթէ պէտք ըլլայ, մեր Դատին, մեր հողերուն ի խնդիր: Այս բոլորը անշուշտ՝ գործնապէս:

Սփիւռքը այսօր ունի որոշ չափով բարեկեցութիւն, նաեւ օտար ուսում, բայց ոչ նպատակասլաց յանձնատուութիւն՝ Հայ կեանքին Համար: Կը փակուին մեր դպրոցները, կը նահանջէ մեր լեզուը, օրէ օր կը նուազի հայերէն կարգացողներուն թիւը: Մեր եկեղեցիները կիսով պարապ են: Կը ստորագասնք հայկականը: Կը նահանջենք ազգային մեր էութենէն եւ ինքնութենէն: Այսօր չենք նմանիր արգիօք իրենց կենսաւիչէն պարպուած ու տապալելու մօտ եղող ծաներու կամ օտար հովերէ քշուող ու չորնայու գաստապարուում տերեւներու:

Մեր ամենէն գիտնական եկեղեցականներէն Գարեգին Ա. կաթողիկոս Սարգիսեանի Համոզումն էր, թէ՛

«...Լեզուի, կրօնի, գրականութեան, արուեստի, մշակոյթի պահպանութիւնն ու պաշտամունքը գիտակցական կենդանութեան աղբւրն է. եւ՝ հիւանդութեան, մահ պատճառող հիւանդութեան, դեղն ու դարմանը» (Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, «Հոգեմտաբոր ծառագայթումներ», Ս. Էջմիածին, 1997, էջ 479):

Ուրեմն, մենք իբրեւ Հայ կ'ունենանք «մահ պատճառող հիւանդութիւն», այսինքն ձուլում, օտարացում եւ անհետացում՝ առանց մեր մշակոյթին:

Իսկ լեզուի ու մշակոյթի պահպանումին ու Հզօրացումին զլիւսւոր ազգակը Հայեցի կրթութիւնն է, մեծագոյն երաշխիքը մեր ազգային ապահովութեան:

Եթէ Հզօր բանակը կենսական կը նկատենք, իրաւացիօրէն, հայրենիքը սահմաններու ապահովութեան, անուանող նոյնքան կենսական է մեր ազգային ապահովութեան տեսակէտէն մեր ժողովուրդին իբրեւ Հայ լինելութիւնը, գոյասեւումն ու Հզօրացումը: Ուժացում եւ օտարացում պիտի չբերին՝ Հայուն անհացումն ու անհետացումը: Ժողովուրդն է հողը արժեւորողը: Առանց ազգային բովանդակութիւն ունեցող ժողովուրդի՝ Հայրենիք մը անիմաստ հողատարածքի կը վերածուի եւ առանց Հայ զգացող ժողովուրդի՝ Հայկական երազ է կը կրնար իրականանալ երեքը:

Հայ Դատի արդիւնաւէտ պայքարին ու յաջողութեան մեր ամենէն ազգու միջոցը կամ գէնքը, ուրեմն, մեր ժողովուրդին մէջ Հայկական ինքնութեան ու ոգին պահպանելն է, որ պէտք է նկատուի քաղաքական առաջնային հարցը:

Իսկ մեր հայեցիութեան դարբնոցը, հայը Հայ պահպանող Հարգաւոր տունը՝ Հայ դպրոցն է: Նիւաւորուած՝ Հայ տաւերուն դիմաց կեցող «ազգանուզան պապուած» Ս. Մեսրոպի հրաշքով: Բայց Հայ դըպրոցը այսօր արժեքզրուած, անտեսուած ու արհամարհուած է տիւրը անհետատեսութեամբ, քաղաքական սխալ մտածողութեամբ:

Մեր դպրոցները իրապէս՝ ուսումնական աւելի ցած մակարդակ ունին, քան օտար վարժարաններն ու Հաստատութիւնները: Բարոյական դաստիարակութեան տեսակէտէն: Օտար միջավայրի մէջ Հայ աղջիկներն ու տղաքը կրնան գերծ մնալ ինքնութեան տարածապէն: Կրնան հեռու մնալ ընտանեական օտար ընդեր կազմելու ցաւալի հաւանականութենէն: Մեր մէջ սակայն «նորածեւութիւն» դարձած է օտարին Հետեւել եւ օտարը կապելը, հոգ չէ թէ այդ նորածեւութիւնը ո՞չ գեղեցիկ է, ո՞չ ճաշակաւոր եւ ոչ ալ օգտակար՝ անապայման:

Բայց ո՞վ պիտի կեցնէ մեզ նահանջի ու Հայաթափումի այս գառնթափին վրայ: Ո՞րք են մեր հովիւները, միութիւններու, կուսակցութիւններու եւ ակուսներու ղեկավարները, ազգային մարմիններու

եւ դպրոցներու հնարաբարձութիւններու անդամներ, որոնք կոչուած են պարզարելու ի խնդիր ազգասահպանումի ու հայրակերտումի: Խօսակցութեաց մէջ յաճախ կը մեղադրուին մեր ղեկավարներէն շատերը, թէ անոնք անկեղծօրէն չեն Հաւատար հայեցի կըրթութեան եւ ընդհանրապէս իրենց զաւակները հայկական վարժարան չեն դրկեր:

Ճի՞շդ է այս մեղադրանքը:

Պէտք է ընդունինք, թէ Մեծ Եղեռնէն ետք Հերոսական աշխատանք կատարուեցաւ Հայեցի կրթութեան տեսակէտէն: Մինչեւ այսօր յուզիչ է տեսնել Սփիւռքի ամբողջ տարածքին՝ Հայաստանեայց եկեղեցիին կողքին բարձրացած Հայ Դպրոցը: Ժամանակը փոխուած է, սակայն, եւ Համաշխարհայնացումի Համահարթեցնող մամիչը կը սպառնայ մեր ինքնութեան: Բայց իր տոկունութեամբ ու կենսունակութեամբ յատկանշուած Հայը պիտի գիտնայ՝ կուրծք տալ խոչընդոտներու ու դժուարութիւններու:

Նրթական Համեմտ միջոցներու տէր Հայը թերեւ կը հետուի «գործնական»՝ «ուր հաց, հոն կաց» Հայեցիութեամբ ուղղութեան մը: Եթէ իր զաւակը օտար, տեղական վարժարան յաճախէ, ան պիտի կարենայ դիւրաւ ապահովել ապրուստի միջոց մը: Կարելի է մատնանել, սակայն, թէ կեանքը գանազան ապարճչներու եւ նոյնիսկ բարձր ապշտօններու մէջ յաջողած են մեծ թիւով շրջանաւարտներ՝ մեր հայկական վարժարաններէն: Շատեր բարձրագոյն ուսում ալ ստացած են:

Միւս կողմէ, նրթապէս բարեկեցիկ ծնողներինց զաւակներուն Համար յաճախ կը նախընտրեն օտար վարժարաններ, որպէսզի անոնք ապագային դիւրաւ Համալսարան ընդունուին: Ու նաեւ՝ այսպէս կոչուած «օգտակար բարեկամութիւններ» կամ «գիրք» պահահովն ընկեցողներն մէջ: Կը մէջբերեմ ասորք մը ապտճառարանութիւններ, զորս անձնապէս իմացած եմ, թէ՛ «գնտպաններն ալ իրենց զաւակները անգլիական վարժարան կը դրկեն», կամ՝ «վարչապետին թոռներն, թէ՛ այսինչ՝ դպրոցը կը յաճախեն Հարց մը, սակայն, ալ է վերջոյ որո՞նք կ'ըլլան արժանի իսկական, մնայուն գիրքի կամ յարգաբարք: Մեր պատմութեան ամենէն լուսապսակ գէմքերէն Մեսրոպ Մաշտոց վանական վարդապետ մըն էր պարգապէս ու Ղեւնդ Երէց՝ քահանայ մը միայն, որոնց անունները սրբեթ մմարգանուած պիտի մնան մեր ժողովուրդի արեւի եւ միտքին մէջ: Մեր ժողովուրդին Համար իրենց մատուցած անանձնական ծառայութեան ու ցուցաբերած անմասնող նուիրումին շնորհիւ է, որ անոք կրցան նուճնդ մեր յաճարական սերունդեղեւն ճշմարիտ յարգանքներ ու սիրոյն բարձրագոյն պատուաբանները, բարձրագոյն «գիրք»-երը:

Ամէն անգամ որ ականատես ու ականջալուր կ'ըլլամ Հայկական դպրոցներու նկատմամբ յաճախ ցոյց տրուած անհիմն ու անարդարանալի վերաբերումին, կը յիշեմ պատանկուութեան տարիներին գիս աննշնելիօրէն տպաւորած ու միշտ խռոված դրուազ մը, պատուած՝ ուսուցչուհի տիկին Մարօ Կէպէչուեանի կողմէ (ծնաւ՝ Պիււպիւրեան. կողակիցը՝ Կիպրոսի Միլիքեան-Ուզունեան ազգային նախակրթարաններու նախկին երախտաշատ տնօրէն Սեղբան Կէպէչուեանի): Տիկին Կէպէչուեանի ուսանողութեան շրջանին, Պուլոյ Դպրոցասէր Տիկնանց Վարժարանին մէջ, ընդհանուր աշակերտութեան ու երիտասարդութեան օգտամուրէի կուռքն էր «Ակիւտարի Սոխակ»-ը՝ Պետրոս Դուբեան, որ իբրեւ տարաբախտ ու վաղամեռիկ հզօր բանաստեղծ արժանացիր էր փառաշուք, բայց սրտայոյզ աննախազէպ յուղարկաւորութեան մը: Այս Հմայքին ներքեւ տիկին Կէպէչուեան ու իր

գրասեղանակից դասուկերութիւն, երկու պատանի ազընակներ, յուզիչ միամտութեամբ մը կ'որոշեն Պետրոս Դուբեանին նմանիլ ու անոր օրինակով բանաստեղծ դառնալ՝ անօթի մնալէ ետք թոքախտ ըլլալով: Չորս օր յիշել կ'ուսեն: Բայց, անշուշտ, բանաստեղծ չեն ըլլար:

Ուր էր թէ ներկայիս Սփիւռքի մէջ ունենալիքը Հայ բանաստեղծութեան ու Հայ դպրութեան նկատմամբ Պուլոյ այդ օրերուն տիրող Հմայքին միայն մէկ կոտորակը:

Վիճակագրութեան մը Համաձայն, այսօր Սփիւռքի այլ պատանիներուն միայն 10 առ հարիւրն է որ հայկական դպրոց կը յաճախէ (Հ.Բ.Մ. Կեղր. Վարչ. Ժողով, 2004, Մարտ 16, տեսնել «Հայ Կեանք», 2004, Մարտ 25, էջ 6): Այսինքն մեր պատանիներուն 90 առ հարիւրը կը թափէ օտար վարժարաններու դուռը: Ցեղասպանութեան գեհնէն անցած ու վերապրած մեր ժողովուրդին վայե՞լ է այս իրողութիւնը: Ազգային ձախողութեան Համազօր չէ՞՞ այս կացութիւնը, որ կեթէ այս ձեւով ընթանայ պիտի նշանակէ ցեղասպանութեան շարունակութիւն: Իսկ մենք... Հաստեղում կը պահանջենք:

Մեծ Ոճիրի Հարիւրամեակի վերջին տասնամեակին այլեւս անկարելի է, որ մեր ազգային ղեկավարներ իրենց անձնական օրինակով ու գործով ջանան կեցնել ազգային այս տեղատուութիւնը: Նոր չունչով ու նոր ոգեւորութեամբ պէտք է վերստեղծուի ու վերաթարձուի մեր մէջ յարգանքը մեր ազգային արժեքներուն նկատմամբ: Մեր ժողովուրդը ընդհանրապէս կը սիրէ հետեւել նորութեանն եւ հօտը յաճախ կ'ընթանայ իր հովիւներուն ճանապարհէն: Ի պատուի պէտք է ըլլան վերակենսաւորուած Հայ դպրոցն ու մեսրոպաշունչ մաքուր Հայերէնը: Ինչու՞ն չսկսիվ արշաւ բանալու ցանց մը՝ այլեւսորումի գէմ Հզօրագոյն ամրաց հայ դպրոցներու, բանայու մանաւանդ Միլդոնեան Կրթական Հաստատութեան նման մի քանի գիշերօթիկ վարժարաններ՝ մեր նոր սերունդներուն տալու հայեցի Համապարփակ կրթութիւն:

Մեր պատմութեան Համար մռայլ ու մուճէ էին Դ. դարու վերջին տարիները: Սակայն շնորհիւ մի քանի տեսիլք ունեցող, հեռատես, անձուէր ու խիզախ առաջնորդներու, մեր Ե. դարը եղաւ մեր Ոսկեդարը, եւ մեր այն օրերու առաջնորդներուն անունները ոսկի տաւերով արձանագրուեցան:

Այսօր եւս մռայլ ու մուճէ են մեր օրերը: Գահաւիժումի ճամբուն վրայ ենք: Պէտք ունինք մեզ ետ բերելու, նոր ուղիներ բանայու, մեր ժողովուրդը շարժելու կարողութիւն ու Հմայք ունեցող «մեծ» գեկավարներու:

Ցեղասպանութեան Հարիւրամեակի վերջին տասնամեակը մեր ժողովուրդին Համար թող ըլլայ ազգային ինքնութեան ամբարակուման, հայեցի կրթութեան տարածման, ներքին հզօրացման ու Համախորնումի տարիներ: Մեր կազմակերպութիւններու ու գանազան ազգային մարմիններու ղեկավարները կրնան ուղեցոյց, օրինակ ու մանաւանդ ներշնչումի աղբւրը ըլլալ ու քաղայրեի վերստեղծութիւնը Հայաբոյմ միջրվայրին, ուր ի պատուի ըլլան մեր լեզուը ու մեր մշակութիւնը: Այս բոլորը՝ անշուշտ առանց կողիւացումի:

Թող այս տասնամեակը ըլլայ Համապարփակ, ամբողջական պահանջատիրութեան ժամանակաշրջան մը: Ըլլայք իստաբարոյ պահանջատէր: Ու նախ պահանջեք մեզմէ՛ ամէն մէկէն, մեր կազմակերպութիւնները՝ Ցեղասպանութեան մեր զոհերուն յիշատակին հանդէպ: Պահանջեք նաեւ բռնաբարուած սերունդները մեր նահատակներուն՝ ցեղասպանութեւրդային: Ամբողջական ու խստաբարոյ պահանջատիրութեամբ միայն կարելի պիտի ըլլայ վերականգնել արագութեւրը ու քաւել չարիքը Մեծ Ոճիրին: